

Պ Ա Տ Ա Տ ՈՒ Կ

Նուէր Յ. Ե. Ս. —



ուգ էր պատել մեր աշխարհն : Հուր , արիւնով ողողած
 Խոժոռ ու մութ այդ երկրում , հին Տաթեւի մօտերը
 Դեռ այսօր էլ տաւարածն ճանապարհորդ անցորդին
 Ցոյց է տալիս Տրմբէսկից՝ Որոտ գետի հովտի մէջ՝
 Հեռուով եղած Երնհայրի Հրոհիփսիմեանց կուսանաց
 Վանքի նախկին բեկորներն : Ժամանակի ժանիքը
 Շատ է կերել ու մաշել մենաստանի արտաքինն .
 Եւ բաղեղի Թրփերը իրեանց փէշի տակ առած
 Քնքըշաքա ծածկել են աւերակներն վերից-վայր :

Մեծ Տրդատի օրերից , որը այնքան տարիներ
 Կրւիւ մղղեց հայրենի մեհեանների քաջ պաշտպան
 Գուրմ-մոգերի դասի դէմ , այնտեղ եղած Անահտի
 Անուան ձօնուած բագինը բաժին տըրուեց կոյսերին :
 Եւ այդ օրից՝ այդ տունը շրջակայքի շինական
 Ժողովրդի համար մի ապաւէն էր , ապաստան :
 Մարդ , տուն չըկար , որ այդտեղ հանգիստ առած չլինէր :
 Այրի չըկար , որ վանքից բաժին տարած չլինէր :
 Եւ սոհմական ու ազնիւ իշխանների համար նա
 Մի սուրբ վայր էր կատարեալ , որտեղ անմէն-մի անհատ
 Հանգիստ առնել կարող էր , Թէ մարմնով , Թէ հոգով :
 Լուսաւորչի օրհնութեամբ այդ սուրբ տան մեծ մայրապետն
 Հրոհիփսիմէ անուանուեց , իբրեւ անդարծ յիշատակ
 Հրոհիփսիմէ մեծ կոյսին : Եւ այդ օրից ըսկըսած
 Մի վաղմիկ , բարեպաշտ սովորութեան համաձայն
 Կուսաստանի մայրապետն Հրոհիփսիմէ էր կոչուում :

Անցան դարեր բազմաթիւ . վանքը ծաղկեց ու շէնցաւ
 Եւ իւր հետ էլ շէնցըրեց չորս կողմն եղած գիւղերը ,
 Ուսումնարան ու վարժոց վանքի բակում՝ պահելով
 Եւ խոր խաւար աշխարհում՝ իբրեւ մի վառ մեծ ձըրագ
 Ու լուսատու դառնալով : Շատ բազմաթիւ լոյսեր էր
 Տրւել նա այդ աշխարհին , բայց ամենից սիրունը
 Այսօր էլ դեռ դիմացի խոր ծոյկի գագաթին
 Քառած փոքրիկ մատուռի անուն կըրող տիրուհին՝
 Շահանգուխտն էր եղել միշտ , որ իր առած կըրթութեան
 Բարոյական քաջութեամբ շատ վեր դասեց նախատակ
 Լինել , քան Թէ անօրէն , անհաւատի կին դառնալ :
 Եւ ամառուայ գիշերներն , երբ որ լուսնի շողերը
 Սիւնեաց երկրի երեսը դադարում են պագնելուց ,
 Ձորի զբլիսին վառ ձըրագն համբոյրներ է ուղարկում

Ձորի գլբրկում կուրծք տըւած կուսանոցի խարոյկին :

Անցան անթիւ տարիներ , մի նոր ուրիշ մայրապետ
Հըռիփսիմէ անոնով մենաստանի գործերը
Անա քանի տարի է ղեկավարում , տանում է
Իբրեւ մի մայր հոգատար , որին իբրեւ մի նոր սուրբ
ձանաչում է շրջակայ ժողովուրդը բարեպաշտ :
Եւ չարատանջ ու դժնեայ , սեւ ու արին ցատուի
Այդ օրերին Հռիփսիմէն մի ծաղիկ էր նորաբաց ,
Որ դեռ մատաղ հասակից ջերմ ու անոյշ գըծումէան
Սրինակ էր կենդանի : Ժամանակի սեւ ու մութ
Խաւար պատած երկնքում այդ վառ , պայծառ պըլպըլան
Աստղըն էր լոկ երեւում : Ազնիւ , տոյմիկ , գեղեցիկ՝
Դեռ հագիւ էր բոլորել քըսան տարին , որ կոյսի
Շըղարշ առաւ երեսին , կրօնաւորի սեւ , երկար
Տարազ առած ուսերին : Նա հովուական գաւազան
Ու մատանի էր կըրում , ինչպէս որ սուրբ , մեծ արհի
Տաթեւացի Գրիգորը : Ուրիշների համար միշտ
Շատ բընական գտնելով ամեն տեսակ աշխարհիկ
Հըրապոյրներ ու վայելք , իւր նրկատմամբ եւ ոչ մի
Ձնչին վայելք իսկ անգամ չէր կամենում թոյլատրել :
Պահանջում էր՝ ամեն օր հէնց առաջին իսկ անոյշ
Քուն քաշելու ժամանակ , որ հերթապահ քոյր-կոյսը
Գար եւ իրեն արթեցնէր , որ ամենից վաղ ինքը
Եկեղեցում գտնուէր . շատ անգամ էլ գատնագող
Վեր էր կենում անկողնից , — մի կոշտ խըշտեակ՝ չոր յարդից , —
Եւ մի անկիւն քաշուելով՝ սաղմոս քաղում ճնկաչոք .
Քուրծ էր կըրում իւր քնքոյշ մարմնի վերայ այժի կոշտ
Մազից շինած խորգ-շալից , ինչպէս նախկին օրերի
Մենակեցիկ Յգնաւոր : Սակայն ոչ ոք վանքի մէջ
Տեղեկութիւն իսկ չունէր մայրապետի արարքից :
Բայց այդ բոլոր խտամբեր արարքներն ու չարչարանքն , —
Որ երբեմն իսկ արդար մեղադրութիւն էր կըրգում
Որոտ գետի միւս ափին ապաստանած Մեծ-Հարանց
Անապատից ուղարկուած խոստովանող ծերունի
Քահանայի բերանից , — այդ ամենը մի վայրկեան
Ձէր իսկ փոխում մեղմ , փափուկ մայրապետի վարմունքը
Իւր հրամանի տակ եղած քոյր-կոյսերի նկատմամբ :
Տարուած նախկին Հայրերի գրուածքներով , սուրբ Գըրքի
Մասին եղած մեկնութեամբ , Խորենացու , Անյաղթի
Քերթուածների ախորժով , Յղիշէի , Փարպեցու ,
Փաւստոսի եւ միւս այլ պատմիչների երկերով ,
Նա մեկնում էր ու պարզում ամենից մութ տեղերի
Խորթին իմաստն ու միտքը այն աստիճան հիշտութեամբ ,
Որ վանական ու գիտուն մարդկանց զարմանքն էր շարժում :
Բայց մայրապետն ինչքան որ գիտնական էր , դորանից
Էլ աւելի բարի էր : Խեղճ ու աղքատ տընանկի
Աղախինն էր՝ հեզ , խոնարհ : Եւ երբեմն փողոցում
Պատահելով ամենքից հալածական բորոտին՝
Համբուրում էր աներկիւղ եւ ըսփոփում խեղճերին :

Քանի՛, քանի՛ հրրաշքներ կատարուել էր իւր ձեռքով : Մի օր , երբ որ վանքի մէջ վերաբերում էր անում , Սուրբ Սկիհը իւր ձեռքին՝ հրբամայեց տաճարի երկինք ելած կամարի տակ ապահով օժեւան Դրտած , հանգիստ բուն դըրած ծիծառների ողջ խմբին , Որ այդ պահուն խանգարում էին իրենց ճոռուողով Աստուածային պաշտամունքն , — լրուել եւ ձայն չընկնէ : եւ իւր ամբիւր շրթունքից ելած խօսք ու հրամանի ձայնին ականջ դնելով՝ ծիծառները իսկոյն եթ թռւան , հասան կամարի դէպ դուրս ցցուած անկիւններն , եւ մինչ օրհնեալ եղերուք ո՛ն լուռ ու անձայն մընացին , Չըհանեցին ձայն-ծալուն : Առաքինի գործերի , Մատուկ արած , բայց յայտնի ողորմութեան ու սիրոյ Արարքների համբարը տարածուել էր շատ հեռու , Ինչպէս վարդի բուրմունքով պատած զեփիւռն Որոտի : Բաժանելու ըստեղծուած իւր զոյգ , քնքոյշ ձեռները երբեք իրար միացած չէին տեսել դեռ մարդիկ : եւ երբ գըլուին ու ուսերն ծածկող ձերմալ սըքեմը Վերան առած անցնում էր , տէր-ողորմեան քաշելով , Իւր ըզգլխից հայեացքը ցած խոնարհած դէպ երկիր , Աստուածային խառնուրդի հըրաշալի զուգորդմամբ կրնոջ նազանքն ու շրնորին , հրեշտակային տեսքի հետ Միանում էր ու ծուլում նորա չքնաղ անձի մէջ :

Այդ երկնային սըրտի մէջ , այսպէս ուրեմն երկրային Ո՛չ մի բան եւ ո՛չ մի կապ չէր մընացել , բացի այն Ջօրեղ ու բուռն , վառ սիրուց , որ սուրբ կոյսը տածում էր Մաղիկների համար միշտ : Նա պաշտում էր ծաղիկներն : Մի յակնթի , շուշանի , մի մեխակի ու վարդի , Կամ անտառի ծնծաղկի , խըլուպուզի , սմբուլի , Անթառամի , Նարգիզի տեսքի առաջ իւր մեղմել Խանդավառած հայեացքը եւ աչքերը իսկոյն եթ Տամկում էին , ցոլ կապում : Մեղադրում էր ինքն իրեն , Ինչպէս որ վատ , անարի մի թուլութեան համար մարդ Մեղադրելի կարող է : Բայց ի՞նչ արած , — այդ նորա Թուլութիւնն էր՝ եւ անբոյժ : Նա պաշտում էր ծաղիկներն : Էւ իւր մաքուր սրտի մէջ , որ քննել էր ինքն իրեն Նա իւր սիրած ու պաշտած ծաղիկներից մէն-մէկի Համար մի սուրբ սէր ունէր , որից ամենքն հաւասար Բաժին էին ըստանում : Նորա խաղաղ խըցիկի Պատուհանի շուրջ բոլորն գրկած վայրի մասերնին Մագըլցում էր դէպի վեր եւ Առաջուց իւր բաշխած Առաւօտեան իւր ծաղկած կոկոնների նազելի Աշիկներով ժպտում էր նորա դիմաց , իբրեւ մի Շատ հընաւուրց ծանօթի : Նորա տեսքից յասմիկը , Կարծես հըմայք ըստացած , իւր ըզմայից բոյք հոուր Տարածում էր իւր շուրջը եւ մեղմանում , ինչպէս մի Անոյշ , աղու մըրմնջով « քեզ սիրո՛ւմ եմ » կըկընող Ու հառաչող անվերջ ձայն : Խաչվերացի Թափօրի Տօնի օրը , Մամկունի Զինմայինից մեր աշխարհն

Իրենց հետը հիւր բերած եւ այդ օրը միւս բոլոր
Ծաղիկների հետ խմբած՝ տըխուր , դարդոտ , Թալկադէմ
Քրիզանթեմը իւր սեռով տերեւների արանքից
Անոյշ ժլպիտ էր ձգուում նորա ամբիժ երեսին ,
Որ այդպիսի քնքոյշ ձեռք մուսցնել է տալիս իւր
Հայրենիքի կարօտը : Իսկ միւս բոլոր ծաղիկներն
նորա քնքոյշ սէրն իրեն էին դարձնում բուրմունքի
Հազար ու մի տեսակի մեղմ պլլեւած ճալքերում :

Այսպէս , ուրեմն , ահա այդ խաղաղ ու խոր հանգստի
Մոցում հանգչող վանքումն էր , որի ամբիժ , բարեպաշտ
Համբաւն աճում , մեծանում էր ամեն օր չորս կողմը ,
Որ Աստուծոյ օրերից մէկն ու մէկը տոսկալի .
Սարսուռ պատուով , չարաղէտ մի լուր հասաւ Մ. Դ. Եւսպաս :

Վերջ դնելով Սիւնիքի մելիքների հետ տրած
Բանակցութեան խաղերին , — որով երկիրն իրեն տալ .
Իսկ աղջիկներն Մօղսի հարէմները անպայման
Ուղարկել էր պահանջում , — Պինչը-Տափակ Հուլաղուն՝
Մօղսների աւագը , հրամայեց Քաթարի
Ջաւահիրին գրոհ տալ այդ անառիկ աշխարհը
եւ անխնայ կոտորել աղնրական ու գեղջուկ ,
Առանց սեռի խտրութեան՝ երիտասարդ ու ծերուկ ,
Թէ որ միայն բանակի երեւալով չը գային
Իբրեւ խոնարհ իրապատակ՝ առանց զէնքի իւր առաջ :
« Բաւական է , ասել էր , որչափ այդ մուծ աշխարհը
եւ զօրքերի արիւնով ներկեց իւր հողն ու ջուրը ,
Անտառներում , ձորերում , խոր կըրճերում զօրքերիս
Շարքերն անվերջ կըլանեց : Հերթը իրենց է հասել :
Վայր եկել տարել է ով առաջըս չի չոքիլ :
Գրոհ տուէք աշխարհը , կոտորեցէք անխնայ » :

Հռիփսիմէ մայրապետն շատ լաւ գիտէր , որ վանքը
Անօրէնի անցնելու Ֆանապարհի իսկ վերայ
Գրտնըւելու պատճառով , հէնց այդ տեղով պիտ' անցնէր
երկրի սիրտը մտնելու , եւ հուր ու սուր սփռելով
Երջակայքը , իւր վանքն էլ պիտի աւեր դարձնէր
Այդ անպիտոն վատշըւէրն եւ իւր անմեղ կոյսերին
Ջեռքից պիտի չըթողնէր : Եւ ո՛վ գիտէ ի՞նչ անարգ ,
Ամօթալի արարքի պիտի մատնէր քոյրերին :
Ով կարող է թող փրկուի : Այդ էր ահա սարսափի
Աղդեցութեամբ տարածուած ձայնն ու կոչը ամեն տեղ :
Ծո՛ւլ էր պատել Տաթեւը , Դարաբասն ու Բռնակոթն
Թափուած կարմիր արիւնից , եւ անարգուած դիակներն , —
Հարս ու կոյսի , պատանու , կարմիր կոհակ յորձանքից
Քշուում , տարւում էր դէպի Որոտ , Շամբի ավերը :
Որովիտեւ Հուլաղուն դուրս էր եկել Մեղրիից :
Հասուէհաս է Հուլաղուն : Քաջարանցի անվեհեր
Միականի Քօռ-Ջաքու հաստ , կոշտ մորթից պատրաստած
Ահ ու սարսափ տարածող Թմբկի ձայնից սիրտ առած

Գալիս հասնում են Լիզզիքն, Քրդի ցեղերն ու Յամթար
 Թուրքի զինուած աղաներն . իրենց արեան ծարաւի ,
 Կողոպուտի , աւարի տենչով բռնուած խմբերով :
 Հասուէհա՛ս է Հուլաղուն : Ով կարող է Թող փախի՛:
 Նա գալիս է յետեւից յիսուն հազար քաջերով ,
 Հետը առած քառասուն պաշարումի զարբազան ,
 երկու հազար սայլերով , եղներ լծած , ոնց գազան ,
 Հալիծորի իշխանի եւ նորա հետ միացած
 Սիւնեաց երկրի զօրքի ղէմ : Եւ եթէ իւր անց կացած
 ձանապարհին վանք տեսնէր . նա այրում էր անխնայ ,
 Սըրի բերան էր տալիս Թէ վանական , քահանայ ,
 Թէ վանահայր , սարկաւազ , Թէ տիրացու եւ Թէ մոնթ :
 Անըզգայ էր , հիռելի , բայց բարեպաշտ մոլեռանդ .
 Ղուրանն երբէք իւր ձեռքից ամենեւին չէր Թողնում :
 Նա անցնում էր արեան ծով . արտասուքի հեղեղի
 Թափուած գետից անվըրդով : Վառուած գիւղերն , աւաններն ,
 Հէնց առաջին պատահած ծառից կախած իշխաններն
 Նորա դաժան երեսի ժրպիտն էին լոկ շարժում :
 Իւր կատաղի զինուորներն՝ Հարանց-վանքում , Տաթեւում ,
 Հալիծորի , Գենուազի , Որոտ , Կալբը ու Վանքի .
 Դարաբասի , Քաջարանց անապատում խեղճ , անմեղ
 Եղբայրներին կապելով շարան-շարան միատեղ՝
 Կըտրուում են ամենքի ձեռքն ու ուսքը եւ յետոյ
 Հըրէշ կտրած դահիճներն խարազանի ու փայտի
 Հարուածներով սոսկալի ծեծ են տալիս հաշմանդամ
 Մարդկանց մինչ այն աստիճան , որ խեղճերը ըստիպուած
 Արիւնթա՛թաւ մարմընի բրգիկ-բրգիկ մասերով
 Փոստով տալով փախչում են այս , այն անկիւնն ու պուճախն .
 ձանապարհի անցքերին փախստական , դողացող
 Աբեղաներն իրենց սուրբ մասունքները կամ ոսկէ
 Սպասները գիրկ առած գաղտագողի անցնում են՝
 Վախկոտ , վրհատ քայլերով : Ուր որ անցնէք՝ լոկ միայն
 Ձեռք երկարած ու մուրով քահանաներ կը տեսնէք ,
 Որոնց ոչ ոք այլ եւրս ոչ կերակուր , ոչ էլ տուն
 Տալ չէ ուզում երկիւղից : Որովհետեւ Հուլաղուն
 Դուրս է եկել Մեղրիից : Նա գալիս է հառուէհաս :
 Ո՛վ կարող է Թող փրկուի , զըլուխ աւնէ ու կորչէ :

Սակայն որչափ իւր վանքին մօտենում էր անսովոր
 Այդ բանակի վրիճակը , այնքան քնքոյշ մայրապետն
 Իրարանցման , վըրդովման քիչ նըշան էր ցոյց տալիս :
 Ահի փախել էր անհետ . երկիւղ չունէր իւր սրտում :
 Կարծէք , Թէ նա վաղեմի , հալածական օրերի
 Նահատակի տիպ լինէր : Եւ երբ մի օր՝ վանքին կից
 Շինուհայրցի մի գեղջուկ , երեկոյեան ուշ պահուն ,
 Վախից լեզուն բռնուած , եկաւ նորան լուր բերեց ,
 Թէ բանակի խմբերը , պատերազմի փողերի
 Հընչիւններով , գալիս են ներքեւ ընկած ձորակով
 Հոսող գետի ափերով , — մայրապետը հակառակ
 Իւր շուրջ խմբուած կոյսերի կարծիքներին , Երամայեց

Լայն բաց անել իսկոյն եթ մեծ դարբասի դռները ,
Կուսանոցի պատերի բոլորք պատող խրամատի
Վերայ ձգգուռով կամուրջը իջեցընել իւր տեղից :
Յետոյ՝ առած քոյրերին եւ նորատի կոյսերին
Ցարան վանքի դասերը , որ Ֆրեագուռով լոյսերի
Շողերի մէջ պննւած մեծ , տօնական պաշտաման
Տեսք էր առել տաճարը , եւ յորդորեց հանգըստեան
Շարականն եր ու երգեր երգել անվերջ , սրտաբուղի :

Թուխ-կարմրագոյն , ամեհի իւր շառատի մէջքին Թառ ,
Որի բերնի փրփուրը ձիւն էր ներկել իւր սանձը ,
Ահա հեռուից Հուլաղուն երեւեցաւ խրոխտաբար :
Շեփորների , փողերի աղմուկների մէջ կորած
Մօտենում է անդադար : Եւ արինոտ երկնքում
Տատանում է իւր յետից Մօլոլների ազգային
Դեղին դրօշն , երախը լայնկեկ բացած , Թաթերով
Ղուբան գրկած վիշապով : Խոր , լայն ձորով անցընող
Ճանապարհի երկայնքը ամբողջապէս բռնուել է
Տէգ , նիգակով , սրբերով , հազար տեսակ վահանով
Ջինուած վխտող ամբոխով : Ութ ահագին ուժեղ եղ ,
Որոնց վրդի տակ կախուած կաշուէ լայն-լայն կախոններ
Աւելում են երկիրը , ինչպէս Լօռու-Հրմզայի
Գետին աւլով շրթունքներն , — բաշ են տալիս բանակի
Ջորապետի յետեւից հսկայական բաբանը ,
Որի երկայնքն ու շուրջը փաթաթուել ու պատել է
Պըղնձածոյլ հրէշ-օձն , մի ահուելի գընդընկէց ,
Որ շինել էր ճէնց ինքը՝ Ջատու-Ալին Սըմըղանդ :
Նորա ձայնն ու շըռիւղը այն աստիճան ահուելի ,
Սոսկալի էր , որ նոյն իսկ ամենից ծեր ու սրտոտ
Ջորականը գլխից-ոտք սարսըռում էր տեղն ու տեղն ,
Իսկ երգնոգիս կանայքը շա՛տ , շատ հեռուից սարսափից
Վիժում էին զաւակներն :

ձիշի խոր ձորի մէջտեղում .

Կուսանոցը շուրջ պատով պարիսպների ոտքի տակ
Քիթը-Պաճօ Հուլաղուն իջաւ աշխէտ իւր ձիւն
Եւ դառնալով չորս կողմը խրոխ եկած , ըսպասող
Շտուռուղների բազմութեան , — « Տեսէք , ասաց , նայեցե՛ք ,
Դուռը բաց է վանդակի , իսկ մէջն եղած Թուշուններն
Թըռւել , փախել են ամենքն : Ուշ ե՛նք հասնում բաւական » :

Եւ յօնքերը պըռստած , զայրոյթ կտրած , կատաղած
Առաջ անցաւ ու կանգնեց կուսանոցի պարբսպի
Շուրջը պատող խրամատի կամրջակի եզերին :
Բայց մի հայեացք ձրգելով ծեր , հինաւուրց դարբասի
Կամարների տակ անցնող մուժ ու խաւար միջանցքին ,
Ցետ-յետ գընաց՝ տեսնելով վառուռ լոյսեր խաւարում :
Բաց , Ֆրեագած տաճարի բիւր բոցերով պլլպլլով ,
Վառուռ պատրոյգ , մոփերի լոյսն ու շողն էր երեւցոյլն :
Հեռուից՝ պայծառ տաճարի բեմն էր տեսնուում իւր խաչով ,

Իսկ կոյսերը շարէ-շար , ումանք կանգնած գլխիկոր ,
 Ումանք չըբած դասերում : Մէկ էլ յանկարծ , մայրապետն
 Ու կոյսերի շարքերը իրենց սնայշ , արծաթի
 Ձայնի ինչուն ելէջով , ուր ոչ մի խաղ իսկ անգամ
 Ձէ դողդողում երկիւղից , հին տաճարի կամարներն
 Ուղղեցին ծոր-տըռող , մեղմադձիկ մղեղու
 « Արի Աստուած » աղերսով , ըղիսած սրտի խորքերից :
 Սրտի ներքին մի յոյգից յանկարծակի բռնըւած ,
 Որ դեռ մինչ այդ ժամանակ չէր ունեցած , զղջացած ,
 Մարդը ապշեց , տատամսեց : Ինքը մի քաջ լինելով՝
 Միշտ յարգում էր քաջերին : Ձայն արծակեց , հրամայեց
 Տեղն ու տեղը բանակել , կապի գընել բանակի
 Գրբաստներն ու ձիերը : Գլխից հանեց իւր ծանրը ,
 Յըցունքներով սաղաւարտն , եւ մի բաժակ ջուր ուզեց :
 Ապա մի կողմ քաշելով իւր օգնական Բաշօյն . —

« Եղբայր , ասաց , անվեցիր ու քաջարի այս կընոջ՝
 Մայրապետի նըկատմամբ մի Թուլութիւն եմ ըզգում .
 Խիղճս է գալիս այդ կինը : Եկ խընայեցք մենք նորան :
 Իմ առաջըս լայն բացած այս դարբասը 'ւ իջեցրած
 Կախանաւոր կամուրջը սաստիկ նեղն են ձըգել ինձ .
 Ես անարի , վատշըւէր մի յաղթական կը լինիմ ,
 Թէ յաղթութեան բաժինըս այս տաճարի դասերում
 Շարականներ , աղօթքներ ու տաղ երգող այս անմեղ
 շարիւրի չափ խեղճ կոյսեր , անդէն կանայք լոկ լինին .
 Եկ խընայեցք մենք նոցա » :

Սակալն , Բաշօն հակառակ
 Կարծիքի էր : « Ըզգոյշ կաց , իմ քաջարի՝ եղբայր , այս
 Մարդկանց վրիժախն յուզելուց : Այս կոյսերը ուզում են
 Յաղթանակել նոցա դէմ : Իսկ միւս կողմից , հաւատա ,
 Որ այդ ճերմակ ծածկոցով ոտքից-գըլուխ պաշտպանուած
 Ամփո , յիմար կոյսերը պիտի նուաղին , վայր Թափուեն ,
 Երբ այս մարդկանց դէմքերը վանքի մուտքից դէպ տաճար
 Ներս խուժեիս հէնց տեսնեն : Մեր ձեռքը տուր այս վանքը ,
 Անենք՝ ինչ որ ուզում ենք : Ամենից լաւն էլ այդ է » :

Բայց իւր դիմաց խօսողին էլ Հուլաղուն չէր լսում :
 Նա վճռել է անելիքն : Քայլերը դէպ վայր կախուած
 Կամրջակը ուղղելով եւ հայեացքով՝ գիշերուայ
 Գրկում կորած լուռ վանքը մարտ ու կըռուի կանչելով ,
 Ձեռքը տարաւ ու կողքից կախուած երկար , վեճ Թուրը
 Քաշեց , հանեց պատեանից , գետին զարկեց իւր ձեռքով :
 « Եա՛ ըիսմըլլահ էլ-Աահիմ , եա՛ փէշլամբար , եա՛ Աի » ,
 Ասաց յանկարծ , Թէ այստեղ ձեռքովս տնկած այս Թըրիս
 Մայրը արմատ կը բռնէ ու կը ծաղկէ այս գիշեր ,
 Դա նշան է , Թէ Ալլահն իւր սուրբ կամքով ուզում է ,
 Որ այս վանքում կոյսերը այսուհետ էլ ապահով
 Իրենց կրօնի երգերը ու ալելուան միշտ ասեն , —
 Եւ ո՞վ գիտէ , Թէ մի օր փէշլամբարի սուրբ դենը

Ձեն ընդունիլ կամովին : — եւ արեւծագ չըբացուած ,
Հաստատապէս խօսք կըտամ , Նոյնչափ հաստատ , որչափ եւ
Իմամ Հասան ու Ալին եզիզներէից մահ գըտան ,
Առանց Նոցա մի մագին , այս տան չոփին ու ծիղին
Մինչեւ անգամ կաշեւու , բանակս կ'առնեմ ու կ'երթամ » :
Այս ասելով զինուորը քայլերն ուղղեց դէպ վըրան
եւ խո՛ր , ծանըր քուն մըտաւ :

Գիշերն իջաւ : Մի խաղաղ .

Պարզ ու վըծիտ , աստղալից . պըլպըլացող վառ գիշեր ,
Որի արծաթ լուսընկայ ցոլքն ու փայլը տարածուել ,
Լուրժ էր կապել չորս կողմը : Եւ դասերի շարէ-շար
Անմեղ կոյսերն խաղաղիկ ու պարզընկայ օդի մէջ
Ճգում , ծորում էին միշտ իրենց հընչուն զիլ ծայնով
Շարականի երգերը , որ լոկ միայն երբեմըն
Ինդհատում էր՝ մեպմ հովի ալիքներէից տատանուող
Խարոյկների բոցերի շուրջը կտրած բոլորած
Պահակների կոշտ ծայնով :

Արշալոյսի վառ շողերն

Արեւելքի բոսորած հորիզոնում վերջապէս
Տարածեցին իրենց լոյսն : Կեանք է առել ամեն ինչ :
Բանակն ելնում , շարժում է , խըլըրտում է , ինչպէս մի
Մեծ , վիթխարի հըրէշ-օծ : Շեփորների ծիգ , երկար
Ականջ ծակող հընչիւններն զարթեցըրեց բանակի
Խոր քուն մըտած մարդոցը , հետն էլ իրենց զըբաստներն :
Առաւօտեան արեւը , դեռ եւս խոտոր ու սառը ,
Սաղաւարտով ծածկոտած ճակատների վերայ մի
Արագ , վախկոտ , ոսկեշող պաղ սարսուռ է տարածում ,
Աչք խորըղում ու անցնում : Եւ բանակի մէջտեղում
Իւր վայր թողած վըրանից դուրս է գալիս Հուլաղուն
Եւ չորս կողմը տարածուած , հագիւ լսուող մըմբող ,
Գրեմնջիւնի շըշուկի միջից անցնում անվըրդով , —
Կազմ ու պատըաստ եւ հագած զըրահ ու վէտ , սաղաւարտ ,
Լուպառազէն , եւ դիմում դէպ ի վանքի մուտքի դէմ
Երէկուանից վայր թողած կախանաւոր կամուրջը ,
Որ իւր աչքով իսկ տեսնէ , թէ ի՞նչ եղաւ իւր սուրը :

Իսկ լերկ ժայռի կողերին թառած խաղաղ վանքի մէջ ,
Դարբանները լայն բացած , դեռ հնչում է բարեպաշտ
Սաղմոսների ծայները եւ տարածում գիշերուայ
Արդէն փախչող ծոցի մէջ սուրբ Մեսրոպի աղերսներն :
Դանըր թուրը մերկ , շիտակ՝ ցցուած , կանգնած է հողում .
Բայց դեռ արմատ չէ բռնել , ոչ էլ պտկել ու ծաղկել
Այդ անց կացած գիշերը սուրբ կոյսերի աղօթքով :
Սակայն միայն լոկ մի օր կեանք քաշելու եւ լոկ մի
Գիշերուայ մէջ հասունցած մի պատաստուկ՝ շեշտ վարսած
Թըրի շեղքի չորս կողմը փաթաթել էր իւր տկար
Պորպըրտոյտ ցողունը : Մայրապետի սիրասուն
Պիւրով սիրած ու պաշտած ծաղիկներից ամենից
digitised by A.R.A.R.®

Թոյն ու տրկարն իւր գրկում հուր-շող ու փայլ արծակող
Հուժկու Թուրը գերել էր, ամուր գրկած Թոյ գրկում,
եւ մեղմ, անոյշ ու ժրպտուն, ինչպէս յառած մի նայուածք,
իւր Թարմ, կապոյտ բաժկիկը Թըրի ճայրին ծաղկում էր :

եւ Հուլաղուն անշարժ, լուռ, երկար կանգնած դիտում էր
Համեստ, անշուք ծաղիկը, մտմտալով իւր տըռած
Խոստման մասին . իսկ հոգին ապշուժինից, վարանքից
Ամբողջապէս յոյգ ելած, կանգնեց, կանգնեց վերջապէս . —

« Տըւէք ինձ մի ուրիշ Թուր, ասաց յուզուած, եւ իսկոյն
Թող բանակը չու ենէ . . . Ձիս քաշեցէք . . . մեկնում ենք » :

եւ ասպազէն, հետեւակ մարդկանց անթիւ մի բանակ
Իւր յետեւից քաշ տալով, որոնց սիրտը անտառի
Համեստ անշուք պատատուկն երկիւղ-սարսուռէր լըցրել,
Նա հեռացաւ :

Խաղիկը փրկել էր իւր սուրբ կոյսին :

Փոխարումիւն Զր. Կոպէից .

1906. Հոկտ. 3/16

ՏԻՐԱՅՐ ՎԱՐԴԱՊԵՏ

Փարիզ.



Յ Ո Ւ Ո Ւ Ք Ի Ր



Թնշաղի մըն էր : Աղեքսանդրիոյ նո-
բակառոյց քարափին երկայնքը կը
դեգերէի, անոր ամբողջ լայնալիճ աղեղը կը տ-
րել անցնելու տենդով մը ջրայնուած : Աչքս
տնկած Սելսելիէ աշտարակին, որ հաստախա-
րխիս կը նստէր արեւելեան լեզուակին ծայրը,
զրեթէ մեքենաքար միայն կը տեսնէի ծովին
ազուոր խաղերը՝ արեւմուտքի նարնջադոյն ու
ա՛յ վատուժ ճաճանչաւորումին մէջ : Ի՞նչ հեշ-
տալի է այդ լքումը, անմասն ու ինքնաշարժ,
սրունքներուդ վրայ որոնք կ'աճեն կը տանին
քեզի՝ կարծես առանց ուզելուդ, ուղեղիդ մէջ
արձագանքելով քայիւրուդ հնչիւնը, վանելով
դուրսի աղմուկները, որ ա՛յ հեռաւոր աղագնքի

մը պէս կ'ըլլան : Մերթ կանգ կ'առնէի, այդ
խօսարչաւ ինքնամոռացումէն վախցած, իրերուն
ու՝ միջավայրին ըմբռնումին դառնալու անզուսպ
կարօտով մը . ու կը տեսնէի, հեռուն, հորիզո-
նին բարձունքին վրայ, կեցած առաքաստառա-
ւեր՝ Թեւատարած կարապներու պէս ճերմակ .
քարափին խարխիւէն դուրս երկնցած՝ Նիզակնե-
րու նման՝ ձկնորսի եղէգնէր. ու հոս հոն պէր-
պէրի կիսամերկ լակոսներ շաքարեղէգի կտոր-
ուանք իրարու ձեռքէ խլելով՝ ծուրթի պէս ճեր-
մակ ակունքերովն իսածառեւու համար վայրե-
նօրէն . ասդին, բարամբին վրայ, ուռեցուորած
բոպիկ ոտուրները վար կախած, Փելլահին մը
կաթ կուտայ իր լաճին՝ վիթխարի ծիծի մը տակ
ծածկած անոր դէմքը, Պատկերին միօրինակու-
թենէն սրանդ՝ նորէն համբայ կ'ըլլայի սրա-
վար, ինքնաշարժ, գրեթէ գինով :

Սելսելիէ իրանը կը մեծնար հեռզհեռէ .
ծովափին լիկած ջրեմուռներուն կիւռ հոտը վեր